

Travel card վճարային քարտի արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.06.2023թ-ից 31.08.2023թ-ը ներառյալ իրականացվող արշավ:

1.2 **Քարտ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրված Travel card Visa վճարային համակարգի հիմնական քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում:

1.3 **Քարտատեր՝** Travel card Visa վճարային համակարգի հիմնական Քարտի քարտապան:

1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 **Գործող Քարտատերերի համար** - Մինչև 31.05.2023թ-ը ներառյալ թողարկված/գործող Քարտ ունեցող Քարտատերերը 01.06.2023թ-ից մինչև 31.08.2023թ-ը ներառյալ իրականացնելով նվազագույնը 800 000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) վճարային գործարք հնարավորություն կունենան ստանալու 60 000 ՀՀ դրամ արժողությամբ վաուչեր՝ Կարպիսա խանութների ցանցից ճամպրուկ ձեռք բերելու համար:

2.2 **Նոր Քարտատերերի համար** - 01.06.2023թ-ից մինչև 31.08.2023թ-ը ներառյալ Քարտ ձեռք բերող Քարտատերերը Քարտի պատվիրման ամսաթվից 3 օրացույցային ամսվա ընթացքում իրականացնելով 800 000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) վճարային գործարք հնարավորություն կունենան ստանալու 60 000 ՀՀ դրամ արժողությամբ վաուչեր՝ Կարպիսա խանութների ցանցից ճամպրուկ ձեռք բերելու համար:

2.3 Սույն Արշավի շրջանակում վճարային գործարք է համարվում քարտով առևտրի սպասարկման կետերում կատարված վճարումները՝ բացառությամբ հեռահաղորդակցության ծառայությունների, կոմունալ ծառայությունների, էլեկտրոնային փողերի, պետական մարմինների վճարումների (հարկեր, տուրքեր և այլ վճարներ), բարեգործական հանգանակությունների, խաղադրույքների, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումների:

2.4 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը ավտոմատ չի կատարվում: Արշավին մասնակցելու համար պարտադիր պայման է Արշավի ընթացքում՝ 01/06/2023թ-ից մինչև 31/08/2023թ-ը ներառյալ գրանցվել այս [հղումով](#) և ընդունել Արշավի կանոնները: Նշված հղումով չգրանցվելու դեպքում Քարտապանները չեն ստանա 60 000 ՀՀ դրամ արժողությամբ վաուչեր (այսուհետ՝ Վաուչեր) անկախ վճարային գործարքների նվազագույն շեմը կատարելու փաստից:

2.5 Վճարային գործարքները կատարելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Քարտապանի էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկի էլեկտրոնային Վաուչերը: Վաուչերը հնարավոր է օգտագործել միայն Կարպիսա խանութների ցանցում՝ ճամպրուկ ձեռք բերելու համար: Եթե Վաուչերի գումարը ճամպրուկ գնելուց հետո ամբողջությամբ չի ծախսվել ապա Քարտապանը կարող է մնացորդային գումարն օգտագործել Կարպիսա խանութների ցանցից այլ գնում կատարելու նպատակով, ընդ որում Վաուչերի գումարը հնարավոր է ծախսել ճամպրուկի գնումը կատարելու պահին: Վաուչերի մնացորդային գումարը հնարավոր չէ օգտագործել ճամպրուկի գնումից առանձին:

2.6 Վաուչերի առկայությամբ Քարտապանները Կարպիսա խանութների ցանցից կստանան 20% զեղչ ցանկացած ճամպրուկի ձեռք բերման համար: Ընդ որում, չկա որևէ սահմանափակում 20% զեղչի ստացման գծով, հետևաբար Քարտապանը կարող է ձեռք բերել իր ցանկացած ճամպրուկը՝ անկախ չափից, գնից, քանակից և տեսակից: 20% զեղչը տարածվում է միայն ճամպրուկների տեսականու վրա: Քարտապանի կողմից Վաուչերի մնացորդային գումարն այլ գնում կատարելու դեպքում ճամպրուկների համար նախատեսված 20% զեղչը չի գործելու՝ փոխարենը կգործի տվյալ պահին Կարպիսա խանութ սրահում գործող փաստացի գինը: 20% զեղչը չի գումարվում Կարպիսա խանութ սրահի կողմից ճամպրուկների համար հայտարարված զեղչին: Ձեռքված ճամպրուկների դեպքում Քարտատերերի համար գործելու է Վաուչերով սահմանված 20% զեղչը կամ Կարպիսա խանութ սրահում գործող փաստացի գինը:

2.7 Վաուչերն օգտագործելու համար Քարտապանը Կարպիսա խանութ-սրահում պետք է ցուցադրի Վաուչերը և խանութ սրահի աշխատակիցը Վաուչերի համապատասխանությունը ստուգելուց հետո կթույլատրի Վաուչերով գնում կատարել:

2.8 Վաուչերի օգտագործման և սույն կանոններում նշված 20% զեղչի ստացման վերջնաժամկետ է համարվում 15/12/2023թ-ը ներառյալ:

2.9 Վաուչերի տրամադրման համար Քարտը պետք է գործող լինի:

2.10 Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանին ուղարկված Վաուչերը չնկատելու դեպքում (ներառյալ spam/junk թղթապանակը) և այն սույն կանոններով սահմանված ժամկետում չօգտագործելու դեպքում:

2.11 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: